ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՊՏՂՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2012 ԹՎԱԿԱՆԻՆ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍՈՎ՝ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ

2013 թվականի հունվարի 15-ին ժամը 14°° ին Պտղունք համայնքում տեղի ունեցավ համայնքի ղեկավար՝ Կ.Արթենյանի հաշվետվությունը 2012 թվականին կատարված աշխատանքների մասով:պ

Հաշվետվությանը ներկա էին աշխատակազմի աշխատակիցները, դպրոցի տնօրենը, մանկապարտեզի վարիչը և կոլեկտիվը, համայնքի 30 բնակիչներ, ներկա էր նաև բնապահպանության բաժնի պետ՝ Սանասար Բաղդասարյանը:

Համայնքի ղեկավարը ներկաներին ներկայացրեց 2012 թվականին կատարված աշխատանքները: Նշվեց, որ հայէլեկտրոցանց «Մուսալեռ» մասնաճյուղի հետ համատեղ համայնքում կառուցվել և շարունակվում է կառուցվել երկու նոր ենթակայան: Տեղվել են 200-ից ավելի հենասյուներ և անցկացվել են լարեր: Այս նոր ենթակայանների շահագործումով համայնքում լրիվ կլուծվի էլեկտրոէներգիաի ապահովման հարցը: Արմավիրի մարզպետի աջակցությամբ 2012 թվականին նորաստեղծ թաղամասում սկսվեց խմելու ջրագծի կառուցման աշխատանքները, որը այսուհետև ընդգրկվեց Ասիական բանկի կողմից ֆինանսավորվող ծրագրի մեջ և 2013 թվականին կշարունակվի համայնքում նոր ջրագծի կառուցման աշխատանքները: 2012 թվականի դեկտեմբեր ամսին համայնքի Տերյանի, Հայկի, Ազաթանազեղոսի և Բաբաջանյան 1-ին փկղ փողոցներում կատարվեցին խճապատման և հարթեցման աշխատանքներ:

Մանկապարտեզում կազմակերպվել և անցկացվել են մարտի 8-ին և Ամանորին նվիրված միջոցառումներ: Գործող երկու խմբերի երեխաներին Ամանորյա հանդեսի ժամանակ բաժանվել են նվերներ: Նվերներ են հատկացվել նաև համայնքի ավագանիներին, մանկապարտեզի և գյուղապետարանի աշխատակիցներին:

Հարգելի համագյուղացիներ հաշվետու ժամանակահատվածում մեր կողմից հաջողվել է իրականացնել հետևյալ աշխատանքները.

ֆինանսական մաս

Եկամուտներ (մուտքային մաս)

հ/հ	հավաքագրված հարկի անվանումը	պլանը տարեկան	փաստացի կատարում	%
1	Հողի հարկ	6500.0	6665.0	102.5
2	Գույքահարկ շենք շինություն	1550.0	1633.5	105.4
3	Գույքահարկ փոխադրամիջոց	4050.0	4087.5	100.9
4	Վարձ. հողի վարձ	480.0	485.3	101.1

5	Այլ ոչ հարկային եկամուտներ	1050.0	669.9	63.8
6	Տեղական տուրքեր	250.0	182.7	73
7	Դոտացիա	15210.8	15210.8	100
8	Հողի օտարումից		1177.4	-
	Ընդամենը	29090.8	30112.1	103.5

Տարեսկզբի մնացորդ՝ 880.8

Ծախսային մաս

հ/հ	Ծախսված գումարի ուղղվածությունը	տարեկան պլան	փաստացի	%
1	աշխատողների աշխատավարձ	10680.0	10066.9	94.3
2	պարգևատրումներ	890.0	705.0	79.2
3	սոց. վճարներ	2124.0	2078.3	97.8
4	Էներգետիկ ծառայություն	900.0	870.0	96.6
5	կապի ծառայություն	200.0	183.0	91.5
6	համակարգչային ծառայություն	22.0	21.6	98.2
7	տեղեկատվական ծառայություն	100.0	75.0	75
8	ընդ. բնույթի այլ ծառայություն	400.0	398.3	99.6
9	մեքենաների և սարք. ընթ. նոր.	100.0	77.0	77
10	գրասենյակային նյութեր	400.0	100.0	25
11	տրանսպորտային նյութեր	600.0	500.0	83.3
12	աղբահանում	780.0	780.0	100
13	ջրամատակարարում	880.8	880.0	100
14	երիտասարդական ծրագիր	500.0	400.0	80
15	սուբսիդիա	9128.0	8401.0	92
16	սոց օգնություն	1500.0	1500.0	100
	ԸՆԴԱՄԵՆԸ	29204.8	27036.1	92.6

տարեվերջի մնացորդ՝ 3957.1 :

Հաշվետու ժամանակահատվածում տեղի է ունեցել 10 ավագանու նիստ: Կատարվել է շուրջ 650 բնակիչների ընդունելություն, որից 530-ին տրվել են տեղեկանքներ: Լուծվել են նաև ընթացիկ այլ հարցեր:

Համայնքի բնակիչները շնորհակալություն հայտնեցին կատարված աշխատանքների համար, անյուհետև բարձրացրեցին հրատապ լուծում պահանջող հարցեր: Նրանք դժգոհեցին դպրոցի անմխիթար վիճակից, ներկայացրեցին, որ դպրոցը չունի ջեռուցման համակարգ, ջեռուցվում է վառարաններով, որի արդյունքում դասասենյակների ջերմաստիճանը չի անցնում վեց աստիճանից: Դպրոցի տնօրեն Միլվա Մկրտումյանը շարունակելով բնակիչների խոսքը ներկայացրեց, որ դպրոցի անմխիթար լինելու հետևանքով համայնքի երեխաները հաճախում են այլ դպրոցներ:

Համայնքի բնակիչները բարձրացրեցին նաև ոռոգման ջրի սակագնի հարցը: Ոռոգման ջրի բարձր սակագնի հետևանքով բնակիչները չեն զբաղվում գյուղատնտեսությամբ, որը հանգեցնում է համայնքում գյուղատնտեսության անկմանը:

Բնակիչները բողոքեցին, որ համայնքում ունենք բուժ կետ, մեկ բուժ քույր, սակայն համայնքում չունենք բժիշկ: Հիվանդանալու դեպքում պետք է դիմենք Մուսալեռի բուժ ամբուլատորիային, որից դժգոհում են մեծահասակները, առաջ բերելով պրանսպորտի և գումարային խնդիրներ: Խնդրում ենք վերանայել և հաշվի առնել համայնքի բնակիչների մեծամասնության խնդրանքը տրամադրելով համայնքին բժիշկ, որը ամեն օր կաշխատի մեր բուժ կետում:

Իր եզրափակիչ խոսքում բնապահպանության բաժնի պետ՝ Սանասար Բաղդասարյանը, համայնքում կատարած աշխատանքները գնահատեց բավարար՝ մաղթելով համայնքի ղեկավարությանը աշխատանքները շարունակել ի բարորություն համայնքի բնակչությանը և հավաստիացրեց, որ բնակչության կողմից բարձրացված հարցերը կներկայացվեն մարզպետին և լուծում կստանան:

Պտղունք համայնքի ղեկավար՝ Կ.Արթենյան